մասը նոյն գերութեան դարում սպանոել էին պարսիկներից, մնացածները ոչնչացրել էր խոլերան:

Մարօն դեռ երեխայութեան ժամանակ որբ մնալով մօրից, փոխարինեց նրան բարեսիրտ Խաթունը, որ խնամք էր տանում փոքրիկ աղջկան մայրական բոլոր գթասրտութեամբ: Բայց գտնոելով աւելի հօր ազդեցութեան տակ, Խաթունի աշակերտուհին չընդունեց նրա դաստիարակութեան այն հոգին, որ ունէր աւելի ջերմեռանդ եւ կրօնական բնաւորութիւն: «ես որսորդ եմ, ասում էր Աւօն, իմ աղջիկը եթէ որսորդ եւս չլինի, գոնեայ պէտք է սիրէ արիւն եւ հրացան»: Այդ պատճառով Մարօի խիստ վաղ մանկութիւնից սկսոեցաւ նրա եւ Խաթունի մէջ մի խուլ հակառակութիւն: Մարօն շատ անգամ ծիծաղում էր, երբ մոլեռանդ Խաթունը իր ձեռքն ընկած բոլոր փողերը հաւաքում էր եւ տէրտէրներին էր տալիս, եւ բացի պարտադիր պասէրը, աւելորդ պասեր էր պահում, եւ սուրբ Սարգսի շաբաթում երեք օր ոչ ուտում էր եւ ոչ խմում: Իր գերութիւնից յետոյ, կարծես, մի ծանր ապաշաւանք էր նստած նրա խղճմտանքի վրայ, որը միշտ աշխատում էր քաւել կրօնքի եւ քահանայի միջնորդութեամբ...

Հասօի կնոջը ես մի քանի անգամ միայն տեսայ, այն եւս ծածկոած երեսով. իր երկրի սովորութեանը հետեւելով, նա չխօսեց ինձ հետ եւ ոչ մի բառ. առհասարակ նա խիստ հազիւ էր երեւում, աւելի զբաղոած էր իր երեխաներով, որոնց թիւը ընտանիքի միւս անդամների համեմատութեամբ, բազմութիւն էր կազմում: Մի բարի բախտով, աղջիկները, դեռ հարս չդարձած, վայելում էին այն արտօնութիւնը, որ կարող էին երեսները առանց ծածկոցի ման գալ եւ տղամարդերի հետ խօսել, եթէ ոչ, միեւնոյնը կը պատահէր իմ եւ Մարօի հետ, ինչ որ պատահեց Հասօի կնոջ վերաբերութեամբ:

Ինչ որ աւելի աչքի էր ընկնում ծերունի որսորդի դրութեան մէջ, այն էր, որ նա այժմ չէր երեւում այնպէս աղքատ, որպէս էր Սալմաստում բնակոած ժամանակ: Արօտների մէջ արածում էին աւելի քան հարիւր ոչխար, տասը հատ ընտիր կովեր ամէն օր քշում էին դէպի նախիրը, արօրը իր ամբողջ պարագայքով գործում էր սեփական արտերի մէջ, տունը լի էր աստուծոյ ամէն բարութիւնով: Հասօի խորշոմած ձեռքերը վաստակեցին այս բոլորը: «այն ժամանակ միայն մշակը կարող է կուշտ փորով հաց ուտել, երբ նրա քրտինքը թափւում է իր սեփական հողի վրաէ, այսպէս էր խօսում ծերունի որսորդը:

Որսորդ Աւօն, որպէս նկատեցի ես, Հաղբակայ ժողովրդի կողմից վայելում էր մեծ յարգանք. նա էր միանգամայն այն երկրի խաղութեան ոգին. նրա մի խօսքը փարատում էր շատ վիճելի երկպառակութիւններ գիւղացիների